# ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158

ք. Մեծամոր

«21» հունվարի 2026թ.

Մեծամորի համայնքապետարան-ը ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աշոտ Անտոնյան» Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 10,000,000.00 (տասը միլիոն) ՀՀ դրամ, Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ծառայության դիմաց վճարումները կատարվելու են փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հետևյալ բանաձևով. ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

- ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.
- ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
- ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
- Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
- Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Միաժամանակ, Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվելու են պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2026թ. ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո՝ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտին, չկատարված գումարի չափով Պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության::

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը փազրված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04410[illegible]

Համայնքի ղեկավար՝ ________ [illegible]
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Աշոտ Անտոնյան» Ա/Ձ
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48
akobyann@list.ru
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711

Ա/Ձ ________ Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«21» հունվարի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավոր գների հանրագումար | ընդհանուր առավելագույն գինը** | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 50111130/501 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | 1. Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝<br>1.1 սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն:<br>2. Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ | դրամ | 4,100,000.00 | 10,000,000.00 | Կատարողի կողմից տրամադրած հասցե՝ Մեծամոր քաղաքում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուի կողմից պահանջը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 30.12.2026թ ներառյալ ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2026 թ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն Հավելվածով 1.1-ով սահմանված գնացուցակին), ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցումը 2 (երկու) օր անհնարին լինելու վերաբերյալ, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:<br>3. Ավտոմեքենան տեխնիկական կայան ժամանելուց՝ առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | (ծառայությունների մատուցումը): 4. Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել մի քանի ավտոմեքենա: 5. Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում: 6. Կատարողը պետք է ունենա առնվազն մի քանի ավտոմեքենայի համար նախատեսված կայանման (պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկում և այդ ընթացքում իրականացված տեսաձայնագրությունը պետք է պահպանվի առնվազն 30 (երեսուն) օր և պահանջի դեպքում 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին: 7. Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին: | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 8. Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան: 9. Կատարողը պետք է տրամադրի համապատասխան երաշխիքային ժամկետներ, որոնց մասով նվազագույն պահանջները բերված են ստորև (այն տողերի մասով, որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել՝ պետք է ներկայացվի համապատասխան տեղեկանք-հիմնավորում): Երաշխիքներ՝ կատարված աշխատանքների համար 6 ամիս, պահեստամասերի համար 6 ամիս, եթե չի խախտվել ավտոմոբիլի շահագործման կանոնները: 10. Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն Մեծամորի համայնքապետարանից առավելագույնը 7 կմ հեռավորության վրա: Անհրաժեշտության դեպքում ավտոմեքենայի նորոգումը պատվիրատուի պահանջով պետք է իրականացվի պատվիրատուի նշված վայրում: 11. Ծառայության | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մատուցման համար անհրաժեշտ բոլոր միջոցները, այդ թվում պահեստամասերը, դետալները, գործիքները, սարքերը և այլ անհրաժեշտ նյութերը, պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: TOYOTA LAND CRUISER PRADO V6 4.0 2005թ. (թվով 1 հատ) և LADA NIVA LEGEND 21214-000-21 2022թ. (թվով 3 հատ) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ համաձայն Հավելված 1.1-ում նշված ցանկի: | | | | | |

**Նշված է, որ առավելագույն ծառայությունների համար առավելագույն գինը, որից ծառայությունները մատուցվելու են ըստ Պատվիրատուի պահանջի՝ Հավելված 1.1-ով ներկայացված գնացուցակով և դրանց դիմաց վճարումները կատարվելու է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա՝ Հավելված 1.1-ով սահմանված գնացուցակի համաձայն, կիրառելով ՎԳ=ՄԳ/ՆԳxԾԳ բանաձևը, որտեղ՝ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է, ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած համապատասխան գինն է, ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, ԾԳ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է, ԲԳ-ն մատուցված ծառայության քանակն է, իսկ մինչև 30.12.2026 թվականը պահանջի բացակայության դեպքում՝ չկատարված գումարի չափով, պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության::

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ---------------------------- Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Աշոտ Անտոնյան» Ա/Ձ
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թաղ. 32-48
akobyann@list.ru
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711

Ա/Ձ ---------------------- Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«21» հունվարի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով պայմանագրի

# ԳՆԱՑՈՒՑԱԿ
## (միավոր առավելագույն գների)

| NN | SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի այլ օժանդակ նյութերի անվանումները | TOYOTA LAND CRUISER PRADO V6 4.0 2005 թ. / 1 ավտոմեքենա/ | LADA NIVA LEGEND 21214-000-21 2022թ. / 3 ավտոմեքենա/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Փոխանցման տուփի վերանորոգում | 180000 | 80000 |
| 2. | Գեներատորի ածուխի փոխարինում | 22500 | 16000 |
| 3. | Ջրի հովացման ռադիատորի փոխարինում | 70000 | 30000 |
| 4. | Մեկնարկիչի փոխարինում | 100000 | 35000 |
| 5. | Կոճ վառոցքի հավաքածուի փոխարինում | 120000 | 25000 |
| 6. | Վռան կայունանարի ռեզիների հավաքածուի փոխարինում | 15000 | 7000 |
| 7. | Առջևի արգելակային կոճղակների հավաքածուի փոխարինում | 20000 | 9000 |
| 8. | Ձգան ռեկային կոկանի փոխարինում | 15300 | 8000 |
| 9. | Լծակ դիմացի վերևի փոխարինում | 27000 | 15000 |
| 10. | Գեներատորի փոխարինում | 140000 | 70000 |
| 11. | Գնդե հոդակապերի հավաքակազմի փոխարինում դիմացի ներքևի | 27000 | 15000 |
| 12. | Առջևի կանգնակի փոխարինում | 20500 | |
| 13. | Անվակունդ հետևի փոխարինում | 32000 | |
| 14. | Հոդակապ դիմացի դրսի փոխարինում | 50000 | 30000 |
| 15. | Հոդակապ դիմացի ներսի ձախ փոխարինում | 63000 | 35000 |
| 16. | Փոխանցման տուփի բրծիկի փոխարինում | 95000 | 15000 |
| 17. | Շարժիչի բարձիկի փոխարինում աջ | 50000 | 12000 |
| 18. | Լուսարձակի լապտերի փոխարինում 1 կոնտակտանի հակամառախուղային | 16000 | |

| | | | |
|---|---|---|---|
| 19. | Շոկի կլանիչների փոխարինում դիմացի | 190000 | 35000 |
| 20. | Շոկի կլանիչների փոխարինում հետևի | 150000 | 35000 |
| 21. | Արգելակման ABS բլոկի ցուցիչի փոխարինում դիմացի | 35000 | 15000 |
| 22. | Ղեկային կոլանի վերանորոգում | 60000 | 30000 |
| 23. | Օդորակիչի լիցքավորում | 25000 | 20000 |
| 24. | Արգելակային սկավառակի փոխարինում ետևի | 60000 | 25000 |
| 25. | Արգելակային թմբուկի փոխարինում ետևի | | 35000 |
| 26. | Շարժիչի փոկի փոխարինում | 14000 | 3000 |
| 27. | Օդի կարգավորման ցուցիչի փոխարինում (ԴՄՌՎ) | 60000 | 25000 |
| 28. | Ջրի հովացման հովհարիչի փոխարինում | 50000 | 35000 |
| 29. | Գլանների հավաքածուի փոխարինում | 35000 | 9000 |
| 30. | Արգելակային տրամաչափի փոխարինում | 40000 | 6000 |
| 31. | Ջրի հովացման խողովակների փոխարինում | 35000 | 9000 |
| 32. | Շարժիչի վերանորոգում | 150000 | 100000 |
| 33. | Շոկի կլանիչ օդային զսպանակի փոխարինում ետևի | 180000 | |
| 34. | Ընդարձակման թաքի փոխարինում | 22000 | 3000 |
| 35. | Սռնի վառոցքի հավաքածուի փոխարինում | 58000 | 12000 |
| 36 | Պոմպ հովացման համակարգի փոխարինում | 72000 | 12000 |
| 37. | Վառան կայունարարի փոխարինում | 90000 | 20000 |
| 38. | Արգելակային կոճղակների հավաքածուի փոխարինում հետևի | 15000 | 9000 |
| 39. | Ղեկային կոլանի ծայրակալի փոխարինում | 13500 | 8000 |
| 40. | Լծակ դիմացի ներքև փոխարինում | 50000 | 19000 |
| 41. | Գնդե հոդակապերի հավաքակազմի փոխարինում դիմացի վերևի | 27000 | 15000 |
| 42. | Գնդե հոդակապերի հավաքակազմի փոխարինում հետևի | 28800 | |
| 43. | Հետևի կանգնակի փոխարինում | 19800 | |
| 44. | Անվակունդ դիմացի փոխարինում | 45000 | 18000 |
| 45. | Հոդակապ դիմացի ներցի աջ փոխարինում | 63000 | 35000 |
| 46. | Հարվածասեղմիչ վռանների հավաքածուի փոխարինում | 35000 | 18000 |
| 47. | Շարժիչի բարձիկի փոխարինում առջևի | 65000 | |
| 48. | Շարժիչի բարձիկի փոխարինում ձախ | 60000 | 12000 |
| 49. | Լուսարձակի լապտերի փոխարինում 2 կոնտակտանի | 18000 | 18000 |
| 50. | Դիագնոստիկայի ծառայություն ըստ պահանջի | 5000 | 5000 |
| 51. | Թերմոստատի փոխարինում | 28000 | 10000 |
| 52. | Արգելակման ABS բլոկի ցուցիչի փոխարինում ետևի | 35000 | |

| | | | |
|---|---|---|---|
| 53. | Ղեկի հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգում | 80000 | 30000 |
| 54. | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 65000 | |
| 55. | Սրահի տաքացման ռադիատորի փոխարինում | 50000 | 15000 |
| | **Առավելագույն միավոր գների գումար** | **3092400** | **1043000** |
| | Ընդամենը՝ առավելագույն միավոր գների հանրագումար | | 4,135,400.00 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

________________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Աշոտ Անտոնյան» Ա/Ձ
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48
akobyann@list.ru
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711

Ա/Ձ

________________ Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«21» հունվար 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության որոնց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը առավելագույն գինը |
| 1 | 50111130/501 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 | 10,000,000.00 |

* Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
** Վճարումը իրականացվում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
______________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Աշոտ Անտոնյան» Ա/Ձ
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48
akobyann@list.ru
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711

Ա/Ձ
______________ Ա. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» _________________ 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«____» __________________ 2026թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
համարը պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» _________________ 2026թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը____________ հայտնում է, որ.

1. _____պատվիրատուի անվանումը____-ի և _________կատարողի անվանումը______-ի միջև «----» ____________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և __կատարողի անվանումը__________-ի միջև «----» ____________ 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունը ազգանունը)

________________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Հավելված 5.1
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «____»_______________ 20 թ.**

«Աշոտ Անտոնյան» ԱՁ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ Աշոտ Անտոնյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Մեծամորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Աշոտ Անտոնյան» ԱՁ
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48.
<<ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711
Աշոտ Անտոնյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

| 1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ* |
|---|
| 2. Թիվ |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ «Աշոտ Անտոնյան» ԱՁ |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ>> ՓԲԸ |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 1930071344170100 |
| 7. Վճարողի ՀՎՀՀ 49631711 |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Մեծամորի համայնքապետարան |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 04440608 |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900335239373 |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1000000 /մեկ միլիոն / |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)* |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 |
| |

| | |
|---|---|
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ |
| 24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

Հավելված 4.2
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան

«____»__________________ 20   թ.**

«Աշոտ Անտոնյան» ԱՁ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ Աշոտ Անտոնյան ն.ք 009443599,տրված 23.07.2018թ. 060-ի կողմից , որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Մեծամորի համայնքապետարան (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158

1.2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Աշոտ Անտոնյան» ԱՁ
Արմավիրի մարզ ք. Մեծամոր 1 թղմ. 32-48.
<<ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1930071344170100
ՀՎՀՀ 49631711
Աշոտ Անտոնյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

| | |
|---|---|
| 2. Թիվ | |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ «Աշոտ Անտոնյան» ԱՁ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ>> ՓԲԸ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 1930071344170100 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ 49631711 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Մեծամորի համայնքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 04440608 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900335239373 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 | |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ |
| 24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |